

U 11
1759

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄՈՀԱՄՄԱԴ ԱԼԻՆԻԱ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(քրեաիրավական և կրիմինալոգիական վերլուծություն)

ԺԲ.00.05- «Քրեական իրավունք և կրիմինալոգիա,
քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան 2017

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

МОХАММАД АЛИНИЯ

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ БОРЬБЫ С ПРЕСТУПНОСТЬЮ
НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ В ИСЛАМСКОЙ РЕСПУБЛИКЕ ИРАН
(уголовно-правовой и криминологический анализ)

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по
специальности 12.00.05 – “Уголовное право и криминология;
уголовно-исполнительное право”

Ереван-2017

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ռ. Ջ. Ավագյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ս. Ս. Ավետիսյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա. Ռ. Մարգարյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ոստիկանության կրթահամալիր**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2017թ. մարտի 1-ին ժամը 15⁰⁰-ին, Երևանի պետական համալսարանում գործող ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2017թ. հունվարի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, իրավ. գիտությունների թեկնածու, դոցենտ *Ս. Ս. Ավետիսյան*

Тема диссертации утверждена в Институте философии, социологии и права НАН РА

Научный руководитель: доктор юридических наук, профессор **Р.З. Авакьян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **С. С. Аветисян**
кандидат юридических наук, доцент **А. Р. Маргарян**

Ведущая организация: **Образовательный Комплекс Полиции РА**

Защита состоится 1-го марта 2017г. в 15⁰⁰ часов на заседании Специализированного совета ВАК 001 по юриспруденции при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 30 января 2017 года.

Ученый секретарь специализированного совета, кандидат юридических наук, доцент *Ս. Ս. Ավետիսյան* **Ա. Ա. Манасян**



11-1759

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի հետազոտության արդիականությունը: Անչափահասների հանցավորությունը ահագնացող սոցիալական վտանգ է ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Իրանի Իսլամական Հանրապետությունում: Անչափահասների հանցավորության վերաբերյալ տարբեր երկրների վիճակագրական տվյալները և իրավակիրառ պրակտիկայի նյութերի վերլուծությունը ցույց են տալիս, որ ինչպես ընդհանուր հանցավորության, այնպես էլ անչափահասների շրջանում կատարվող հանցավորության հարցում աճի միտում է նկատվում: Այդպիսի դրություն է նաև Իրանի Իսլամական Հանրապետությունում, որտեղ երկրի բնակչության 54 տոկոսն անչափահաս երեխաներ են, և ըստ պաշտոնական վիճակագրական տվյալների, ընդհանուր հանցավորության համայնապատկերում՝ 7-10 տարեկանների հանցավորությունը կազմում է 10%, թմրամիջոցների ապօրինի շրջանառության և օգտագործման գծով՝ հիմնականում 13-14 տարեկան անչափահասների մասնակցությունը (2005-2010թթ. կտրվածքով) կազմում է 7.5-8.0%: Այս առումով քրեագիտական և քրեաբանական գրականության ուսումնասիրությունը, խնդրի նման իրավակիրառ և դատական պրակտիկայի վերլուծությունը ցույց են տալիս, որ Իրանի Իսլամական Հանրապետությունում վերջին ժամանակներս անչափահասներին բնութագրական է որոշակի տեսակի հանցանքների կատարումը: Ընդհանուր հանցավորության համայնապատկերում զգալի տեսակարար կշիռ է կազմում նաև անչափահասների կողմից բռնությամբ զուգորդված, հասարակական կարգի դեմ ուղղված և համակարգչային տեխնոլոգիաների օգտագործմամբ կատարված հանցագործությունների թիվը: Միաժամանակ շարունակում է մտահոգիչ մնալ անչափահասների լատենտային (թաքնված) հանցավորության վիճակը, ինչը պայմանավորված է զանազան օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: Այդ հանցավոր արարքների ճնշող մեծամասնությունը կատարվում է իրավիճակի սխալ ըմբռնման և գնահատման, բնավորության «տղայական» հատկանիշներն ապացուցելու ցանկության, ուրիշի ազդեցության ոլորտ ընկնելու, հանցավոր աշխարհի «հեղինակավոր» չափահասներին հետևելու և հարակից այլ պատճառներով:

Նման կրիմինալ գեներալիզացիան անչափահասների շրջանում անհրաժեշտաբար ենթադրում է համալիր արդյունավետ միջոցառումների մշակում և իրականացում՝ անչափահասների հանցավորության կանխարգելման համար: Աքսիոմատիկ ճշմարտություն է, որ հանցավորության, այդ թվում՝ անչափահասների հանցավորության դեմ պայքարի հաջողությունից է կախված Իրանի հասարակության զարգացման ներկան և ապագան, քանի որ անչափահաս-երեխան

¹ Stu' 100, ص 1386, تهران, انتشارات بنیاد حقوقی میزان, نوجوانان، بزهکاری اطفال و صلاحی ج. بزهکاری اطفال و نوجوانان، انتشارات بنیاد حقوقی میزان، تهران، 1386، ص 100. Անչափահասների հանցագործությունը, Միզան իրավաբանական հիմնադրամ իրատ., Թեհրան, 2007, էջ 100):

ապագայի այն կարող ներուժն է, որը կխթանի Իրանի սոցիալ-տնտեսական և կրոնամշակութային բնագավառների զարգացումը:

Անչափահասների հանցավորության կայուն աճին են նպաստում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մի շարք խնդիրներ, մասնավորապես՝ երկարատև տնտեսական սանկցիաներն Իրանի նկատմամբ, որոնք վերջերս են վերացվել, գործազրկության բարձր մակարդակը, բնակչության կենսամակարդակի անկումը, ամուսնալուծությունները, կրթության բնագավառում ծառայած բազմաթիվ հարցերը և այլն, որոնք ուղղակի կամ անուղղակի ազդեցություն են թողնում անչափահասների բարոյահոգեբանական վիճակի, և վերջին հաշվով, մարգինալ վարքագծերի ձևավորման վրա: Այսպես, 2015թ. Իրանի Իսլամական Հանրապետության անչափահասների դատարանի խնամակալության կողմից հայտարարված տվյալների համաձայն, ճանապարհատրանսպորտային իրավախախտումները, դիտավորությամբ հասցված վնասները, գողությունը, անզգուշությամբ մարմնական վնասներ պատճառելը, ակոհոլային խմիչքների օգտագործումը, անձի պատիվն ու արժանապատվությունը վիրավորելը, ապօրինի անբարոյական կապերը, ինչպես նաև ակոհոլային խմիչքների տեղափոխումը և օգտագործումը հանցանքներն են, որոնք նկատվում են անչափահասների դատական գործերում²:

Այս առումով սոցիալական կարևոր նշանակություն է ձեռք բերել անչափահասների հանցավորության վիճակի համակողմանի ուսումնասիրությունը, մասնավորապես հանցավորության դինամիկան, զարգացման միտումները, դրդապատճառների առանձնահատկությունները, ինչպես նաև կանխարգելման հետ կապված հիմնախնդիրների բացահայտման և դրանց համարժեք լուծումների առաջադրումը:

Վերոշարադրյալով է պայմանավորված թեմայի հետազոտության արդիականությունը:

Թեմայի գիտական հետազոտության վիճակը: Անչափահասների հանցավորության հետ կապված հիմնախնդիրների հետազոտություններն Իրանի Իսլամական Հանրապետությունում բավարար չեն, չնայած որ այդ հանցավորության այս կամ այն ասպեկտները հետազոտվել են հետևյալ գիտնականների՝ Ալի Նաջաֆիթավանայի, Դանեշ Թաջզամանի, Սալահի Ջավիդի, Հասանի Ալիաբարի, Ահմադի Դարանիի, Ամիր Մոհամմադիասլի, Աբբաս Աշուրիի, Մոհամմադ Շամբայթիի և այլոց աշխատություններում:

Այս առումով՝ հատկապես պետք է հատուկ ընդգծել, որ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացի-ասպիրանտներ՝ Ռոզիտա Շիրանդայի և Մոհիեդդին Մոհամմադիի աշխատությունները, որոնք հաջողությամբ

յամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ Երևանում, որոնցում խոսվում է նաև Իրանի Իսլամական Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության, հանցագործության և պատժի հիմնահարցերի վերաբերյալ³:

Հավուր պատշաճի գնահատելով վերոնշված հարգարժան գիտնականների կատարած հետազոտությունները, արդուհանդերձ գտնում ենք, որ դրանցով ատենախոսության թեման չի ավարտվել, քանի որ բազմաթիվ հարցեր՝ կապված անչափահասների հանցավորության առանձնահատկությունների հետ, իրենց համարժեք լուծումը չեն ստացել:

Հետազոտության տեսական հիմքը: Սույն ատենախոսական աշխատանքի տեսական հիմքն են հանդիսացել Իրանի և արտասահմանյան գիտնականների աշխատությունները նվիրված քրեական իրավունքի, կրիմինալոգիայի, մանկավարժության, հոգեբանության հիմնախնդիրներին, հանցավորության դրդապատճառներին, շեղված (մարգինալ) վարքագծին, կանխարգելմանը և դաստիարակման հարցերին:

Հետազոտության նորմատիվ-իրավական և փորձարարական հիմքն են կազմում Իրանի Իսլամական Հանրապետության քրեական օրենսդրությունը (քրեական և քրեական-դատավարության օրենսգրքերը), շարիաթը, դատական պրակտիկան, իրավակիրառ գործունեության նյութերը և վիճակագրական տվյալները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Թեկնածուական ատենախոսության ուսումնասիրության օբյեկտը անչափահասների հանցավորության հետ կապված հիմնախնդիրն է, իսկ առարկան՝ անչափահասների հանցավորության դինամիկան, կառուցվածքը, պատճառները և կանխարգելման հարցերը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Սույն ատենախոսական աշխատանքի նպատակն է բացահայտել անչափահասների հանցավորության պատճառները և կանխարգելման հարցերը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունում:

Նշված նպատակին հետամուտ՝ հեղինակը փորձել է լուծել հետևյալ **խնդիրները**.

- վերլուծել անչափահասների հանցավորության դինամիկան և զարգացման մոտումները,

³ Տես՝ Ռոզիտա Շիրանդայի, Շարիաթը և երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրները Իրանի Իսլամական Հանրապետության իրավական համակարգում (տեսական-իրավական վերլուծություն), Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2012: Մոհիեդդին Մոհամմադի, Հանցավորության և պատժի հիմնահարցերը մուսուլմանական իրավական համակարգում (Իրանի Իսլամական Հանրապետության օրինակով), Սեղմագիր իրավ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն: Երևան, 2014:

² Sbu՝, 17 ص 2581, شماره 1395/02/23 روزنامه شرق, www.sharghdaily.ir (Շարղ օրաթերթ, հ. 2581, 12.05.2016, էջ 17, www.sharghdaily.ir)

- բացահայտել անչափահասների շրջանում կատարվող հանցագործությունների քրեաիրավական և կրիմինալոգիական բնութագրերը,

- ներկայացնել առաջարկություններ Իրանի գործող օրենսդրության կատարելագործման և իրավակիրառ գործունեության բարելավման համար,

- մշակել միջոցառումների համալիր՝ ուղղված անչափահասների հանցավորության կանխարգելմանը:

Հետազոտության մեթոդաբանական հիմունքները: Սույն ատենախոսական աշխատանքի իրականացման ընթացքում օգտագործվել են հետևյալ ընդհանուր և հատուկ մեթոդները. համակարգային վերլուծության, վիճակագրական, իրավահամեմատական և իրավաբանական վերլուծության:

Ատենախոսության գիտական նորույթը կայանում է նրանում, որ համակարգված և համակողմանի վերլուծության են ենթարկվել Իրանի Իսլամական Հանրապետությունում անչափահասների հանցավորության քրեաիրավական և կրիմինալոգիական ասպեկտները, մասնավորապես՝ դինամիկան, կառուցվածքը, պատճառները, ինչպես նաև կանխարգելման և վերադաստիարակման հետ կապված հիմնահարցերը: Հեղինակը համակողմանի ուսումնասիրելով դատական պրակտիկայի նյութերը և քրեական օրենսդրության կիրառման հետ կապված հարցերը, մշակել է (ըստ հեղինակի) գիտականորեն հիմնավորված առաջարկություններ և հանձնարարական բնույթի հետևություններ՝ անչափահասների հանցավորության դեմ արդյունավետ պայքարելու համար: Մասնավորապես, հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը մշակել է մի շարք առաջարկություններ՝ ուղղված Իրանի Իսլամական Հանրապետության քրեական օրենսդրության կատարելագործմանը և իրավակիրառ գործունեության բարելավմանը, հատկապես օրենսդրական նախագծեր, փոփոխություններ և լրացումներ կատարելու իսլամական քրեական պատիժների օրենսգրքում և քաղաքացիական օրենսգրքում՝ կապված անչափահասների տարիքի, պատիժների կիրառման և վաղաժամկետ ազատման, հատուկ դաստիարակչական հաստատությունների (կենտրոնների) ստեղծման հետ: Գիտական նորույթի տարրեր են պարունակում նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներն են.

1. Անչափահասների հանցավորությունը Իրանի Իսլամական Հանրապետությունում վերջին երկու տասնամյակներին, ըստ դատական պրակտիկայի պաշտոնական վիճակագրական տվյալների, դրսևորվում է կայուն աճի միտումներով, որը հեղինակի կարծիքով, պատճառաբանվում է սոցիալ-տնտեսական և քաղաքական մի շարք գործոններով (տնտեսական սանկցիաներ, գործազրկություն, կրթության ոլորտի ոչ բավարար ֆինանսավորում, ապահարզանների աճ և այլն): Բացի դրանից, հեղինակի կողմից ուսումնասիրված դատական պրակտիկայի նյութերից, կարելի է պնդել, որ նկատվում է անչա-

փահասների հանցավորության լատենտայնություն և բռնի-չափադիտական շարժառիթներով կատարվող հանցագործությունների աճ:

2. Իրանի Իսլամական Հանրապետության հանցավորության մոտ 36 տոկոսը⁴ կատարվում է անչափահասների շրջանում (կամ անմիջականորեն կամ էլ ներգրավվելով չափահասների կողմից կատարվող հանցավոր արարքի մեջ): Սա խիստ հարված է հասցնում Իրանի հասարակության կոնահոգեբանական, բարոյա-էթիկական, սերունդների շարունակականության ապահովման և սեփականության իրավունքի պաշտպանության հարաբերություններին, այսինքն՝ անչափահասների կողմից կատարվող հանցագործություններն ուղղված են նաև իսլամի հիմնարար արժեհամակարգի դեմ:
3. Իրանի Իսլամական Հանրապետության կատարված սոցիալական հետազոտությունների տվյալների համաձայն, անչափահաս հանցագործների ընտանիքների բարոյահոգեբանական վիճակն անկայուն է կամ անուսնալուծված են, նրանք չունեն կրթություն կամ շատ անբավարար է նրանց կրթական և դաստիարակչական մակարդակը, ինչպես նաև նրանց մարզինալ (շեղված) վարքագծի ձևավորման վրա վճռորոշ ազդեցություն են թողնում էկրաններից և համացանցերից քարոզվող բռնությունները, անպարկեշտ էկրանավորումները, անհատապաշտական գաղափարախոսությունը, որոնք պարարտ հող են նախապատրաստում կրիմինալ իրավիճակների առաջացմանը, հետևաբար նպաստում են անչափահասների կողմից քրեորեն պատժելի արարքների կատարմանը:
4. Հեղինակի կողմից ուսումնասիրված դատական պրակտիկայի նյութերը վկայում են, որ անչափահասների շրջանում կատարվող հանցանքների պատճառ են հանդիսանում նաև անչափահասների միջանձնային «հարաբերությունները»՝ կապված ինքնադրսևորման, ինքնահաստատման, ինքնազարգացման հետ, «ճշտի ու սխալի» յուրօրինակ մեկնաբանությունների և «անտագոնիստական» վիճաբանությունների ու անհամաձայնությունների հետ: Դրանք ոչ միայն «վատ» կամ «շեղված» վարքագծի դրսևորումներ են, այլև յուրահատուկ բողոքի արտահայտման ձև՝ ուղղված հասարակությունում առկա ցածր սոցիալ-տնտեսական համակարգի, վատ վարչարարության, գործազրկության, աղքատության, ոչ բավարար զբաղվածության և հարակից հարցերի դեմ:
5. Իրանի Իսլամական Հանրապետությունում ներկայիս սոցիալ-տնտեսական գործոններով պայմանավորված մի շարք անբարենպաստ իրավիճակները հասարակության մեջ (կենսամակարդակի անկում, աշխատանքի և ընդհանրապես զբաղվածության խիստ ցածր մակարդակը, ոչ բավարար կրթություն

⁴ Տվյալները ըստ՝ 105 ص 1386، نشر میزان، تهران، ج. بزهکاری اطفال و نوجوانان، چاپ اول، نشر میزان، تهران، 1386، ص 105 (Սալահի Ջ., Անչափահասների հանցագործությունը, Ա տպ., Միզան հրատ., Թեհրան, 2007, էջ 105)

և դաստիարակություն, ծնողազուրկ երեխաների աճ և այլն) ստեղծում են ճգնաժամային վիճակներ, որոնց առկայության դեպքում անչափահասների որոշակի մասը չի կարողանում հանրօգուտ աշխատանքով կամ համապատասխան ծառայություններով զբաղվել, ինչն իր հերթին հզոր ֆրուստրացնող գործոն է, որը մեր կարծիքով նպաստում է անչափահասների շրջանում ոչ միայն առանձին հանցագործությունների կատարմանը, այլև յուրահատուկ խթանիչ է հանցավորության աճի վերարտադրության համար:

6. Անչափահասների բարոյահոգեբանական ճիշտ զարգացման համար որոշիչ դերակատարում ունի ընտանիքը, շրջապատը, հասարակությունը և հասարակությունում տիրող արժեհամակարգը: Այդուհանդերձ հեղինակը գտնում է, որ ընտանեկան դաստիարակությունը ամենանշանակալիցն է երեխայի՝ որպես անհատի ձևավորման գործում և դրան չի կարող փոխարինել որևէ այլ դաստիարակություն (դպրոց, կրթություն, աշխատանք, հասարակական գործունեություն և այլն): Սակայն երբ ընտանիքն անկայուն է կամ սոցիալապես կազմալուծված, երեխայի համար ստեղծվում է չափազանց բարդ հոգեվիճակ, որը ներառում է ինչպես սոցիալական, այնպես էլ բարոյական կողմերը: Հետևաբար ստեղծված բարդ կացությունը պայմանավորվում է նաև անչափահասների ոչ ֆորմալ խմբերի մարզինալ ուղղվածությամբ: Հեղինակի ուսումնասիրած դատական պրակտիկայի նյութերը հավաստում են, որ անչափահաս երեխաները, որոնք հայտնվում են ծանր սոցիալ-կենսական վիճակներում, դառնում են ճակատագրով յուրայիններ և հայտնվելով նույն ոչ ֆորմալ խմբում կամ կազմակերպությունում, գիտակցական թե ենթագիտակցական մակարդակով որոշում են իրենց պատկերացմամբ հասնել սոցիալական արդարությանը՝ հակահասարակական կամ քրեական պատժելի արարք կատարելով:
7. Անչափահասների հանցավորության կանխարգելումը՝ որպես իՒՀ հասարակության և դավանող կրոնի՝ իսլամի առաջնահերթ խնդիր, բավականաչափ բարդ ու դժվարին է, սակայն, մեր կարծիքով, լուծելի է և անհրաժեշտաբար թելադրում է մի շարք համալիր և համարժեք միջոցառումների միաժամանակյա իրականացում. պետական քաղաքականության մակարդակով պետք է մշակվի անչափահաս երեխաների դաստիարակման, կրթության և զբաղվածության գործողությունների ծրագիր-հայեցակարգ, որի հիման վրա պետք է ընդունվի համապետական օրենք՝ մանրամասն իրավակարգավորումներով: Օրենքի դրույթների իրականացմանը պետք է անմիջական մասնակցություն ունենան ինչպես պետական հաստատություններն ու ինստիտուտները, այնպես էլ կրոնական համայնքները և հասարակական կազմակերպությունները:
8. Օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ.

ա) Իրանի Իսլամական Հանրապետության քրեական պատիժների օրենսգրքի (քրեական օրենսգրքի) 1210-րդ հոդվածի առաջին կետը փոփոխել հետևյալ խմբագրությամբ. «Լրիվ չափահաս են համարվում 18 տարին լրացած տղաներն ու 16 տարին լրացած աղջիկները»⁵: Նշված փոփոխման իմաստը նրանում է, որ քրեական պատասխանատվությունը, մեր կարծիքով, սահմանվի անչափահաս-տղաների համար 18 տարին, աղջիկների համար՝ 16 տարին բոլորած: Բ) ԻՒՀ քրեական օրենսգրքը լրացնել նոր հոդվածով՝ 1211 հետևյալ խմբագրությամբ. «Եթե մինչ 18 տարին լրանալը կատարած հանցանքի համար պատիժ կրող անչափահասը 18 տարին բոլորելուց հետո կատարում է կանխամտածված հանցանք, ապա դատական որոշումների համակցությամբ նշանակված պատժի կրումից վաղաժամ ազատման համար պատիժը կրող անձը (պատշաճ վարքագծի առկայության դեպքում) պետք է կրած լինի ընդհանուր պատժի ուղիղ կեսը»:

9. Աշխատանքում առաջարկվում է օրենսդրության (քրեական) մակարդակով ամրագրել հիմնարար սկզբունք՝ հետևյալ ձևակերպումով. «Անչափահասների (16-ից մինչև 18 տարին չբոլորած) կողմից կատարված ոչ դիտավորյալ հանցանքների համար՝ դաստիարակչական (հարկ եղած դեպքում՝ բժշկական բնույթի) միջոցառումներ՝ դատարանի հայեցողությամբ, իսկ դիտավորյալ հանցանքների համար՝ կախված հասարակական վտանգավոր բնույթից, քրեական պատիժների օրենսգրքով սահմանված հնարավորինս նվազագույն ազատազրկման ձևով՝ դատարանի հայեցողությամբ»:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Կատարված հետազոտության տեսական նշանակությունը նրանում է, որ աշխատանքի դրույթները և ստացված արդյունքները կարող են հիմք հանդիսանալ հետազոտումնասիրությունների, ինչպես նաև քրեական իրավունքի, քրեագիտության և քրեաբանության առարկների ուսումնասիրության ընթացքում:

Հետազոտության գործնական-կիրառական նշանակությունը կայանում է նրանում, որ աշխատանքում պարունակվող առաջարկությունները, եզրակացությունները և հետևությունները կարող են կիրառվել իրավապահական և դատական մարմինների կողմից՝ անչափահասների հանցավորության դեմ մղվող պայքարում:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսական աշխատանքը պատրաստվել է ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնում, որտեղ նաև կազմակերպվել է աշխատանքի քննարկումը և երաշխավորումը հրապարակային պաշտպանության:

⁵ Նշված տարիքային տարբերությունը գալիս է Ղուրանից և շարիաթից և չի հակասում կրոնական ոչ բարոյական նորմերին (Դա Իրանի հասարակության ավանդական կանոնն է):

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Աշխատանքի կառուցվածքը պայմանավորված է հետազոտության՝ առարկայով, նպատակով և խնդիրների դրվածքով: Ըստ այդմ՝ աշխատանքը բաղկացած է ներածական մասից, երեք գլխից, որոնք ներառում են 11 ենթագլուխ, ամփոփումից և օգտագործված գրականության ցանկից: Ընդհանուր ծավալը կազմում է 128 էջ՝ ներառյալ գրականության ցանկը (թվով՝ 108 աղբյուր):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածության մեջ հիմնավորվում է ատենախոսության թեմայի հետազոտության արդիականությունը, ներկայացվում է գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական նշանակությունը:

Աշխատանքի առաջին գլուխը՝ «Անչափահասների հանցագործությունների ընդհանուր քրեաիրավական բնութագիրը ըստ Իրանի Իսլամական Հանրապետության օրենսդրության» վերտառությամբ, բաղկացած է հինգ ենթագլխից:

Առաջին գլխի առաջին ենթագլխում՝ «Անչափահասների հանցագործությունների ընդհանուր բնութագիրը ըստ մահմեդական իրավունքի» վերնագրով, հեղինակը համակողմանի վերլուծության է ենթարկել անչափահասների հանցավորության հետ կապված հարցերը մահմեդական իրավունքի տեսանկյունից: Ըստ մահմեդական իրավունքի անչափահասների կատարած հանցագործության համար պատասխանատու էին նաև նրանց ծնողները կամ խնամակալները: Այդուհանդերձ, մահմեդական քրեական իրավունքը շեշտադրումը կատարում է անչափահասների հանցավորության կանխարգելման և դաստիարակման հարցերին:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում՝ «Իրանում անչափահաս-երեխայի օրենսդրական բնորոշումը» վերնագրով, հեղինակը իրավահամեմատական վերլուծության մեթոդաբանությամբ պարզում է տարբեր իրավակարգերում անչափահասության տարիքային սահմանի հետ կապված հարցերը և դրանք համադրում է Իրանի Իսլամական Հանրապետության օրենսդրության հետ: Հեղինակը վերլուծելով Իրանի օրենսդրությունը, մահմեդական դոկտրինը և իրավակիրառ դատական պրակտիկան, տարբերակում է անչափահասության զարգացման երեք փուլ՝ մանկության և անգիտակցական շրջան, հարաբերական գիտության շրջան և հասունության և գիտակցության շրջան, երբ կարող է վրա հասնել քրեական պատասխանատվությունը (որպես կանոն՝ 12-15 տարեկանները):

Առաջին գլխի երրորդ ենթագլխում՝ «Անչափահասների հանցավորության վրա ազդող ընդհանուր գործոնները» վերնագրով, հեղինակը հանգամանորեն քննարկում անչափահասների հանցավորության վրա ազդող ընդհանուր

գործոնների դերակատարումն այդ հարցում: Ըստ հեղինակի՝ այդ գործոններն են՝ սոցիալական, կենսաբանական և անհատական, արտակարգ և անուղղակի, ընտանեկան միջավայրի հետ կապված գործոնները:

Առաջին գլխի չորրորդ ենթագլխում՝ «Անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների հիմնական տեսակները» վերնագրով, հեղինակը վերլուծելով Իրանի Իսլամական Հանրապետության հանցավորության դինամիկան, դասակարգման է ենթարկել անչափահասների կողմից կատարվող հանցագործությունները հետևյալ տեսակի. սեփականության դեմ կատարվող հանցագործություններ, անձանց դեմ ուղղված հանցագործություններ և հանրային կարգուկանոնի դեմ ուղղված հանցագործություններ:

Աշխատանքի երկրորդ գլուխը՝ «Անչափահասների հանցագործությունների սոցիոլոգիական եվ հոգեբանական ասպեկտները» վերտառությամբ, բաղկացած է չորս ենթագլխից:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Անչափահասների հանցավորությունը սոցիոլոգիական տեսանկյունից» վերնագրով, հեղինակը վերլուծել է անչափահասների կողմից կատարվող հանցագործությունների սոցիոլոգիական դրդապատճառներն ու ծնող պայմանները (սոցիալական միջավայր, բնական միջավայր, տնտեսական միջավայր և այլն):

Աշխատանքի երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Ձանգվածային լրատվության միջոցով արտացոլված վայրագության ազդեցությունը երեխաների ազդեցիվ վարքի ձևավորման վրա» վերնագրով, հեղինակը բացահայտում է զանգվածային լրատվության միջոցով ցուցադրվող ու քարոզվող բնությունների և այլ վայրագությունների ուղղակի կամ անուղղակի ներգործությունն ու ազդեցությունը անչափահասների հակաօրինական և հանցավոր վարքագծի ձևավորման ու դրսևորման վրա:

Աշխատանքի երկրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «Ընտանիքը և անչափահասների կողմից կատարվող հանցագործությունները» վերնագրով, հեղինակը հիմնավորում է ընտանեկան կոնֆլիկտների և ամուսնալուծությունների բացասական ազդեցությունը երեխաների մարզինալ (շեղված) և հանցավոր վարքագծի դրսևորումների վրա, որոնցով վերջիններս փորձում են իրենց բողոքն արտահայտել ծնողների և ընդհանրապես՝ հասարակության նկատմամբ:

Երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում՝ «Անչափահասների հանցավորության հոգեբանական ասպեկտները» վերնագրով, հեղինակը բացահայտել է հանցագործություն կատարած անչափահաս-երեխաների հոգեբանական ասպեկտը, որը սոցիալական և կենսաբանական գործոններից ոչ պակաս ազդեցություն է ունենում անչափահաս մարզինալ վարքագծի ձևավորման վրա:

Աշխատանքի երրորդ գլուխը՝ «Անչափահասների հանցագործությունների կանխարգելման հիմնախնդիրները» վերտառությամբ, բաղկացած է երեք ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում՝ «Դատարանը և անչափահասների հանցագործությունների կանխարգելման հիմնախնդիրը» վերնագրով, հեղինակը ներկայացնում է հոգևոր և աշխարհիկ դատարանների դերը անչափահասների հանցավորման կանխարգելման, վերադաստիարակման և անչափահասների ճիշտ ճանապարհը ցույց տալու հարցերում: Այս առումով, հեղինակը գտնում է, որ դատարանի դերը պատժելը կամ հատուցումը չէ, այլ դաստիարակչական համապատասխան միջոցառումների նշանակելը և դրանց կատարման վերահսկումը:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ «Ուղղիչ հաստատությունների և կենտրոնների դերը անչափահասների հանցավորության կանխարգելման խնդրում» վերնագրով, հեղինակը նախ՝ գտնում է, որ անչափահաս հանցագործները պետք է իրենց պատիժը կրեն չափահաս հանցագործներից առանձնացված հատուկ հաստատություններում և, երկրորդ, անչափահասների համար նախատեսված ուղղիչ հիմնարկների հիմնական առաքելությունը պետք է լինի մարգինալ վարքագծի անչափահասների ուղղումը, դաստիարակումը, ինչպես նաև աշխատանքային հմտություններին սովորեցնելը:

Աշխատանքի երրորդ գլխի երրորդ ենթագլխում՝ «Անչափահասների հանցավորության ընդհանուր և հատուկ կանխարգելման հիմնախնդիրները» վերնագրով, հեղինակը հանգամանորեն վերլուծության է ենթարկել ինչպես հանցավորության կանխարգելման ընդհանուր միջոցառումները, այնպես էլ անչափահասների հանցավորության կանխարգելման հատուկ միջոցները:

Կատարված հետազոտության արդյունքների հիման վրա հեղինակը հանգել է հետևյալ եզրակացությունների.

1. Վերջին տասնամյակում Իրանի Իսլամական Հանրապետությունում, պայմանավորված մի շարք արտաքին (սանկցիաները) և ներքին (սոցիալ-տնտեսական ծանր խնդիրները) գործոններով, նկատվում է անչափահաս-երեխաների հանցավորության աճի կայուն միտում, որում առանձնանում են հատկապես բռնության և շահադիտական դրդապատճառներով կատարվող հանցագործությունները, ինչը, որպես կանոն, բնութագրական է անչափահասներին և արտացոլում է նրանց ինչպես տարիքային, այնպես էլ բարոյա հոգեբանական և սոցիալ-դաստիարակչական առանձնահատկությունները: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում մշակել անչափահասների հանցավորության դեմ պայքարի արդյունավետ և օպտիմալ միջոցառումներ՝ պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների ու հաստատությունների մակարդակով:

2. Անչափահասների հանցավորության վերաբերյալ քրեական իրավունքն անհրաժեշտ է մշակել այնպես, որպեսզի նրանց կողմից կատարված հանցագործությունների նկատմամբ հակազդեցությունը լինի մեղմ, քան մեծահասակների իրավախախտումների դեպքում:

Դրա համար անհրաժեշտ է անչափահասների համար առանձնացնել ինքնուրույն քրեական օրենսդրություն և իրավադատություն, ընդ որում դատական գործընթացների մասնակիցները (ըստ անչափահասների գործերի՝ դատապաշտպան, օրինական ներկայացուցիչ, դատարանների սոցիալական աշխատակիցներ) պետք է հատուկ պատրաստվածություն ունենան դաստիարակչական աշխատանքների հարցերում և տիրապետեն դեռահասային քրեագիտության հիմունքներ:

Պայքար անչափահասների հանցավորության դեմ, դեռահասների հանցագործության կանխարգելում և դժվար դաստիարակվողների հետ աշխատանք կամ ըստ անչափահասների գործերով քրեական իրավունքի նորմերի մշակում, որի ընթացքում անհրաժեշտ է պահպանել արդար դատաքննության գործընթացի սկզբունքները, կողմնորոշված մարդու ճակատագրում «նվազագույն» միջամտության ցանկությունը (սուբսիդիարության սկզբունք):

3. Անչափահասների քրեական գործերով պաշտպանի պարտադիր մասնակցության ապահովում՝ սկսած նախնական քննությունից մինչև դատարանի դատավճռի հրապարակումը, որը բխում է նաև Իրանի միջազգային պարտավորություններից:

4. Եթե գոյություն ունի անչափահաս հանցագործների համար քրեական օրենսդրությամբ նախատեսված նախնական կալանավորման կամ պատժի դատապարտման վերաբերյալ որոշման սպառնալիք, իրավապաշտպանի ամրագրումն անհրաժեշտ է դարձնել պարտադիր: Բացի դրանից պետք է ապահովվի դատական գործում անձանց մասնակցությունը, ովքեր ունեն դեռահասի դաստիարակման իրավունքը (ծնողներ, օրինական ներկայացուցիչներ) և սոցիալական աշխատակիցները, ովքեր կարող են պատմել վերջինիս սոցիալական կարգավիճակի և կոլեկտիվում հարմարեցման ունակությունների վերաբերյալ:

5. Իրանի Իսլամական Հանրապետությունում անչափահասների նկատմամբ նախնական կալանքը կիրառվում է հաճախ չարդարացված, դրանով չարաշահում են՝ կիրառելով այն որպես ազատության կարճաժամկետ զրկմամբ պատիժ: Առավել հաճախ դա կիրառվում է թմրամոլության և ալկոհոլի նկատմամբ «հակում» ունեցող անչափահասների նկատմամբ: Իմ կարծիքով, դրանց նկատմամբ պետք է կիրառվեն բժշկական և դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ: Սա չափազանց բարդ ու խնդրահարույց խնդիր է մի երկրի համար, որտեղ իշխում են շարիաթի քրեաիրավական և բարոյաէթիկական նորմերը:

6. Գործնականում նախնական կալանավորման փուլում, բացի փաստաբանի պարտադիր մասնակցությունից, անհրաժեշտ է նաև իրավադատության սոցիալական աշխատակիցների մասնակցությունը, այսպես կոչված, նախքան կալանավորման վերաբերյալ որոշման կայացման փուլում օգնության ցուցաբե-

րումը (օրինակ, պայմանական դատապարտվածի վարքագծի հսկողություն), նրանք ըստ հնարավորության նախքան կալանավորման հրամանաթղթի տրամադրումը որոնում են մեղադրվող անչափահասների տեղավորման կամ բնակեցման այլընտրանքային տարբերակներ: Նախնական կալանավորման փոխարինման տարբեր համակարգերը պետք է ընդգրկեն ինչպես ինտերնատում տեղավորումը, այնպես նաև սոցիալական հսկողությամբ ապրելու այլ ձևերը: Ինչ վերաբերում է տնային կալանավորման ժամանակ էլեկտրոնային միջոցներով հսկողությանը, ապա այստեղ նույնիսկ եթե վերացարկվենք սոցիալական աշխատակիցների կողմից իրականացվող հսկողության ավանդական ձևերի համեմատությամբ կասկածելի կանխարգելիչ առավելություններից, էթիկ-իրավական և սահմանադրական-իրավական տեսանկյուններից արտահայտվում են էական մտավախություններ:

7. Անչափահասների (տղաների և աղջիկների) համար դատվածության կիրառության տարիքային հատվածը, մեր կարծիքով, անհրաժեշտ է երկարացնել համապատասխանաբար՝ 18 (տղաների) և 16 (աղջիկների) համար: Կարելի է միայն ողջունել նույն սերնդի հաջորդ տարիքային խմբի վրա այդ ոլորտի տարածման միտումները (18-20 տարեկանը ներառյալ), քանի որ նաև այստեղ է հաճախ խոսվում բարդություններով կամ էպիզոդիկ անցումային տարիքով պայմանավորված վարքագծային շեղումների վերաբերյալ, որոնց նկատմամբ կարող են կիրառվել ըստ անչափահասների գործերի քրեական իրավունքի հատուկ միջոցները:

8. Հնարավոր չէ տալ միանշանակ հանձնարարական քրեական պատասխանատվության ստորին սահմանի հաստատման համար, բոլոր դեպքերում գտնում ենք, որ պատժել անհրաժեշտ է եվրոպական երկրների մեծամասնության կարգադրագրերի համաձայն՝ ոչ վաղ, քան 14-16 տարեկան հասակում՝ տղաների և աղջիկների համար:

Ինչ վերաբերում է ազատագրվման հետ կապված սանկցիաներին, այսինքն՝ անչափահասների համար կալանքի վայր տեղափոխությանը, ապա դա, մեր կարծիքով, պետք է թույլատրվի ոչ վաղ, քան 16 տարեկան հասակում:

9. Անչափահասների հանցավորությունների կանխարգելման շրջանակներում անհրաժեշտ է մշակել աստիճանային համակարգ, որը կապահովի դատական գործընթացի բոլոր մակարդակներում զոհի և հանցագործի միջև կոնֆլիկտի հարթեցում կամ փոխհատուցման առավելություն:

Հանցագործի և զոհի միջև համաձայնության առավելությունը լավագույն կերպով արտահայտվում է նրանում, որ որոշակի հանցագործությունների դեպքում, մասնավորապես՝ սեփականության նկատմամբ հանցագործությունների, ուրիշի գույքի վնասման, թեթև մարմնական վնասի հատուցման ժամանակ, եթե առկա լինի համաձայնության ձեռքբերման հաջողված ջանքեր: Անչափահասնե-

րի գործերի եվրոպական քրեական իրավունքի կարգադրագրերի համանմանությամբ, Իրանում նույնպես անհրաժեշտ է նման դեպքերում հրաժարվել իրավախախտման համար հետագա հետապնդումներից: Տվյալ ոլորտում, ըստ անչափահասների գործերի դատարանների կամ դատախազությունների հայեցողության, գործի կասեցման խնդիր այլևս գոյություն չունի:

10. Առավել ծանր հանցագործությունների կամ արդեն դատական գործընթացում հաջորդած փոխհատուցման դեպքում, ըստ անչափահասների գործերի դատախազությունը կամ դատարանը կասեցնում է գործի վարույթը, եթե արդարացի հաշտությունը վերականգնվում է իրավախախտի կողմից: Բոլոր դեպքերում՝ սանկցիաների ընտրության և պատժի միջոցի որոշման ժամանակ, մեր կարծիքով, անհրաժեշտ է հաշվի առնել ըստ համաձայնության ձեռքբերման անչափահասի ջանքերի մեղմացուցիչ հանգամանքները:

11. Հնարավոր է, որ պայմանական դատապարտվածի վարքագծային ուժեղացված հսկողության աստիճանում կարելի է հավասարակշռել նաև այնպիսի մասնակի-ստացիոնար պատիժներ, ինչպես, օրինակ, ազատության մասնակի-պայմանական զրկումը, կամ ազատությունը սահմանափակող պատիժները, օրինակ, տնային կալանքի ձևով: Միևնույն ժամանակ չի կարելի ժխտել «Սոցիալական հսկողության» ցանքի ընդարձակման և նույնակացման վտանգը: Դատավճռի պայմանական հետաձգման նախապատրաստման նպատակներով կարճաժամկետ, ընդլայնական կալանավորման ձևերը ոչ միշտ, սակայն պիտանի և անհրաժեշտ են նրա համար, որպեսզի ձեռք բերվի առանձնահատուկ դժվար դեռահասների սոցիալական ինտեգրումը, այդ իսկ պատճառով դրանք պետք է լինեն՝ համաչափ և ընդունելի սոցիոմի կողմից: Ըստ պատժի հետաձգման ավանդական ձևերի համեմատությամբ այստեղ չկան առավելություններ ոչ հատուկ, ոչ ընդհանուր կանխարգելման տեսանկյուններից:

12. Անչափահասի ազատագրվման կամ ուղղիչ հաստատությունում նրա տեղավորման պատրաստման նախադրյալը կարող է հանդիսանալ միայն մեկը, կատարած հանցագործության ծանրությունը, սակայն բոլոր դեպքերում որևէ կերպ չի փոփոխվում դաստիարակության պահանջը: Նրա անցյալը (նախկին դատվածությունները) դատապարտման և ազատագրվման ժամկետների սահմանման դեպքում չպետք է հաշվի առնվի, նրա համար, որպեսզի բացառվի ազատագրվումը կրկնակի իրավախախտումների դեպքում: Արարքին պատժի համամասնության սկզբունքը որպես մեկնաբանության լիմիտային նորմատիվ երաշխավորում է, որ նշանակվող պատիժը չի հանդիսանում անհամամասնություն նախնական իրավախախտման նկատմամբ:

13. Որոշակի իրավախախտումների և տարիքային խմբերի նկատմամբ անհրաժեշտ է նախատեսել լրացուցիչ սահմանափակումներ անչափահասներին ազատագրվման հետ կապված դատավճռի ընդունման ժամանակ (օրինակ, ան-

չափահաս հանցագործների համար քրեական օրենսդրությամբ նախատեսված պատիժների բացառում 14 կամ 15 տարեկան դեռահասների գործերի նկատմամբ):

14. Ազատագրկման հետ կապված պատիժն անչափահասների դեպքում չպետք է գերազանցի մեծահասակների համանման պատժի կեսից ավելին: Հակառակը, պատժի մեղմացման վերաբերյալ հատուկ կանոնները պետք է ծառայեն որպես երաշխիք, որ անչափահասը ոչ միայն հազվադեպ, քան մեծահասակը, կդատապարտվի ազատագրկման, այլ նաև կիրառվեն միջին և էական առավել կարճ ժամկետներ: Դրա համար իրավական հնարավորություն պետք է ընձեռվի անչափահաս հանցագործների քրեական օրենսդրությամբ նախատեսված պատիժների բացարձակ սահմանների որոշակիացմանը:

Անչափահաս հանցագործների համար քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժի նվազագույն չափի խստացումը, կամ ուղղիչ հաստատությունում մնալու ժամկետների երկարաձգումը (օրինակ, որպեսզի ապահովվի այդ հաստատությունում անչափահասի որոշակի ուսուցումը կամ դաստիարակությունը) պրակտիկորեն իրեն չի արդարացնում:

15. Եթե ազատագրկումը և ստացիոնար (մասնավորապես՝ անչափահասների համար) ուղղիչ հաստատություններ տեղակայումը հանդիսանում է անխուսափելի, ապա դաստիարակչական տեսանկյուններից դրանք իրենցում պետք է ընդգրկեն սոցիալականացման օգնության ձևերի առավել լայն միջոցառումների ժողովածու: Փոքր և այդ իսկ պատճառով լավ վերահսկվող խմբերի շրջանակներում կարելի է իրականացնել պատժի կրման ընդհանուր բնակարաններում համատեղ բնակության ընթացքում ամբողջ հաստատության առավելագույն հնարավոր բաց լինելու և դեռահասի սոցիալական ու ընտանեկան շրջապատի ընդգրկման հանգամանքում: Առանձնահատուկ կարևոր են դպրոցական և մասնագիտական միջոցները, սակայն դրանց համար դեռահասներն սկզբում պետք է պատճառաբանված լինեն: Ազատագրկման հետ կապված պատժի կրման համատեքստում մեծ նշանակություն ունի իրավունքների պաշտպանության և մասնավորապես ազատագրկման վայրերում մարդու իրավունքների նվազագույն կանոնների պահպանումը:

16. Իրանի օրենսդրությունում հանցագործության կանխարգելումն իր կարևոր ու օրինական տեղն ունի: Քանի որ Իրանի Սահմանադրության փորձագետների խորհուրդը և օրենսդիր մարմինը քրեական իրավունքին կից նախատեսել են կանխարգելման օրինական հիմունքները: Սահմանադրության 156-րդ հոդվածի 4-րդ կետը համարվում է երկրում քրեական իրավունքի առանցքային աղբյուրը: Քանի որ դատական իշխանության պարտականությունն է սահմանել՝ հանցագործության բացահայտումը, հետապնդումը և այլն: Իսկ 4-րդ կետից անմիջապես հետո, նույն հոդվածի 5-րդ կետում փորձագետների խորհուրդը որ-

պես այլ պարտականություն է նախատեսել հանցանքը կանխելու և հանցագործներին շտկելու համապատասխան քայլերը: Մյուս կողմից, սահմանադրության առաջաբանում, դատական հասկացության վերաբերյալ բաժնում խոսվել է ժողովրդի շեղումները կանխելու մասին, իսկ այդ շեղումներից մեկը կարող է հանդիսանալ հանցանքը: 156-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերն ընդհանուր առմամբ երկրի քրեական քաղաքականությունն են համարվում: Իսկ 4-րդ կետը մասնավորապես վերաբերվում է կրիմինալ քաղաքականությանը: Հետևաբար, սահմանադրության փորձագետների խորհուրդը հանցագործության դեմ պայքարի համար համատեղ է ներկայացրել ճնշումն ու կանխարգելումը: 4-րդ կետը վկայում է քրեական բնույթի կանխարգելման մասին և փաստորեն ընդգրկում է պատիժների իրականացումը, քրեական արդարության գործադրումը և հանցագործության կանխարգելում՝ հանցագործներին պատժի ենթարկելու սպառնալիքի միջոցով: Ընդհանուր առմամբ, անչափահասների հանցագործության ի սպառ վերացումն անհնար է: Այդուհանդերձ, գոյություն ունեն մեթոդներ ու միջոցներ, որոնց օգնությամբ կարելի է զգալիորեն կրճատել անչափահասների հանցավորությունը և կանխել նրա տարածումը:

ա) Հետևաբար, խիստ կարևոր է հանցագործությունների պայմանների և պատճառների բացահայտման ու դրանց վերացման դրույթը, և անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ խիստ կարևոր է նաև անչափահասների հանցագործությունների կանխարգելումը: Հետևաբար, ինչպես նշվեց, ընտանիքը և տարեկիցների խումբը խիստ կարևոր դեր են խաղում անչափահասների հանցագործության հարցում:

բ) Դպրոցում անչափահասի ձեռք բերած փորձը, ընտանեկան միջավայրում ստացած փորձի հետ մեկտեղ կատարելագործում են նրա անձը: Ակնհայտ է, որ դպրոցների և ընտանիքի հնարավորությունների ու գրավչությունների անբավարար լինելու դեպքում, անկասկած, գործ ենք ունենալու այս խմբում մեծ մասշտաբի շեղումների հետ: Հետևաբար, հասարակությունը պետք է արտակարգ գերակայություններ նախատեսի ընտանիքի ու նրա անդամների կարիքների ու բարեկեցության համար: Իսկ այդ գերակայությունները պետք է նախատեսվեն առաջին հերթին ընտանիքի, ապա՝ ուսումնադաստիարակչական ոլորտի համար:

գ) Կառավարության և հասարակության կողմից անհրաժեշտ քայլերի ու ծրագրերի միջոցով կարելի է այնպիսի պայմաններ ստեղծել, որ ընտանիքներն անհրաժեշտ չափով առանցքային գիտելիքներ ստանան ծնողների դերի, զավակի դաստիարակությանն առնչվող պարտականությունների և երեխայի խնամքի վերաբերյալ:

դ) Եվ ի հետևումն վերը նշվածի, կառավարությունը ուսումնադաստիարակչական համակարգերի միջոցով ճիշտ կրթություն և դաստիարակչական աշխա-

տանք գործադրելով, պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնի այն դե-
ռահասների նկատմամբ, ում վտանգներ են սպառնում:

Անհրաժեշտ է, որպեսզի ձևավորվի այնպիսի ինստիտուտ կամ կազմա-
կերպություն, որը հատուկ լիազորություններով կարողանա որպես միջնորդ, տե-
ղակայվի անմիջականորեն կառավարության ու ընտանիքի միջև և առավել ընդ-
լայնի ու ամրացնի կառավարություն-ընտանիք երկկողմ կապը, այսպիսով,
նման կառույցի միջոցով հնարավոր կդառնա բացահայտել ու կիրառել նպատա-
կահարմար տարբերակներ և ընտանիքներին տրամադրել լավագույն ու ամենա-
հարմար ուսուցումն ու աջակցությունը, որպեսզի վերջիններիս երեխաները զերծ
մնան մարգինալ վարքագծից և դրանով կանխվեն հնարավոր իրավախախ-
տումները:

Ատենախոսական աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մենագրություն՝ Անչափահասների հանցավորության պատճառները Ի-
րանի Իսլամական Հանրապետությունում, Երևան, 2016, 88 էջ:
2. Մենագրություն՝ Անչափահասների հանցագործությունների կանխարգել-
ման հիմնախնդիրները Իրանի Իսլամական Հանրապետությունում, Երևան,
2016, 68 էջ:
3. Mohamad Alinia, Juvenile Delinquency (With Emphasis on Economic
Factors)// International Research Journal of Finance and Economics ISSN 1450-2887
Issue 144 January, 2016, pp. 83-96.
4. Ալինիա Մ. Անչափահասների օրինազանցությունը՝ կրիմինալոգիայի տե-
սանկյունից: Գիտական-բուհական գրքերի հրատ., Թեհրան, 2015, 52 էջ:
5. Ալինիա Մ. Ուսումնասիրություն անչափահասների օրինազանցության
վրա ազդող պատճառների ու գործոնների վերաբերյալ: Գիտական-բուհական
գրքերի հրատ., Թեհրան, 2015, 64 էջ:
6. Alinia M. Investigation of children and teenagers crime and supports from
legislator // Life Sciense journal, 2012, 9 (4), NY, USA, pp. 4594-4599:
7. Ալինիա Մ., Համակարգչային, տեխնոլոգիական կամ էլեկտրոնային հան-
ցագործություններ // Օրենք և իրականություն, Երևան, 2011, № 8 (190) Օգոս-
տոս, էջ 36:
8. Ալինիա Մ., ՁԼՄ-ներով ներկայացվող բռնության ազդեցությունը երեխա-
ների արտահայտված ագրեսիվության վրա // Օրենք և իրականություն, Երևան,
2011, № 6 (188), Հունիս, էջ 37-38:
9. Ալինիա Մ., Ընտանիքի ազդեցությունը պատանիների զանցառու վար-
քագծի վրա // Օրենք և իրականություն, Երևան, 2011, № 2 (184), Փետրվար, էջ
27-28:

МОХАММАД АЛИНИА

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ БОРЬБЫ С ПРЕСТУПНОСТЬЮ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ В ИСЛАМСКОЙ РЕСПУБЛИКЕ ИРАН (УГОЛОВНО-ПРАВОВОЙ И КРИМИНОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ)

РЕЗЮМЕ

В общем, трудно отличить необычных несовершеннолетних. Однако, существуют методы, благодаря использованию которых возможно значительно сократить преступность среди детей, предотвращая расширение ее границ. Необычное несовершеннолетие является новым и удручающим явлением в ряде социальных опасностей, и оно состоит из ряда преступлений, совершенных несовершеннолетними.

В Иране, где 46 процентов населения это лица, которым исполнилось 18 лет, обнаружение правонарушений очень важно и в деле их обнаружения Иран достиг некоторых результатов. Правонарушение это такое явление, которое включило в себя все прошлые слои человеческого общества и лечение которого и борьба с ним сегодня осуществляется разными методами. Мировое общество сегодня стоит перед большой проблемой. Если в прошлом это проблема касалась в частности развитых и промышленных стран, то сегодня промышленное развитие и поток в города стали носить глобальный характер. Основное направление в деле с несовершеннолетними это политика уголовных инстанций - в вопросе выбора методов и инструментов для вынесения решений против преступности.

Следовательно, для семей, в которых есть несовершеннолетний контроль и воспитание могут привести к светлому будущему страны и это в значительной степени способствует государству. Семья, школа и общественность являются основными факторами усовершенствования социальной жизни. Предотвращение преступлений наиболее важно и может значительно сократить преступную жизнь в обществе. Социальные факторы преступлений несовершеннолетних, в общем, состоят из следующих трех групп: 1) преступления в отношении чужого имущества и недвижимости, в том числе кража и подделка документов; 2) преступление против другого лица, в том числе убийство, насилие с особой жестокостью и умышленное убийство; 3) преступление против общественного порядка и безопасности, в том числе трафикинг проституток и наркотиков, нарушение социальной безопасности и другие, а также компьютерные преступления. Первая глава диссертации является общим обзором о преступных несовершеннолетних и изучает

социальное значение и границы этого преступного явления, а также представлены определение преступления в разных странах, в различных социальных классах. В этом смысле, были использованы разные источники, в том числе в разных уголовных инстанциях и у врачей и ученых, занимающихся умственными проблемами, и собран ряд сведений относительно преступлений несовершеннолетних, а также были сравнены преступления совершенные в мирных и военных условиях.

Во второй главе было проведено социальное и психологическое исследование преступления. Преступление это социальное явление и необходимо предотвращать его причины и формы. В социологии после роли семьи, второй важный фактор это экономическая нищета. Были изучены социальная, естественная, экономическая среда, влияние средств массовой информации, кино, телевидения и прессы.

Были учтены и изучены роль подражания и воздействия, недостаток любви, проблемы семьи, работающие матери, отсутствие отца в семье и потеря родителей.

В третьей главе изучены качество и организация инстанций, кратко представлены процесс развития инстанций несовершеннолетних и подходы разных инстанций в мире по отношению к несовершеннолетним. Говорится о формате процедур инстанций в Иране. Далее обратили внимание на роль, формирование исправительных учреждений для несовершеннолетних, и составной части предыстории института несовершеннолетних. А также поговорили о важных функциях этих исправительных учреждений, в том числе переосмысление индивидуальных качеств, образование и воспитание детей, медицинские услуги, уход и развитие детей, которые изменились в результате реформ методов. А также были обсуждены важность положений предотвращения преступлений. Наконец, частично было изучено руководство ООН о предотвращении преступлений: 1. основные принципы, 2. диапазон инструкций, 3. общее предотвращение, 4. методы социального воспитания, 5. социальная политика, 6. законодательство относительно несовершеннолетних и главное организованное управление.

Практико-прикладная значимость исследования заключается в том, что в нем, на основании изучения норм УК Ирана и практики их применения, даны предложения по совершенствованию законодательства Исламской Республики Иран о борьбе с преступностью несовершеннолетних.

В этом смысле можно констатировать, что работа носит как теоретико-академический, так и практико-прикладной характер.

MOHAMMAD ALINIA

KEY ISSUES OF THE STRUGGLE AGAINST JUVENILE DELINQUENCY
IN THE ISLAMIC REPUBLIC OF IRAN (CRIMINAL-JURIDICAL AND
CRIMINOLOGIC ANALYSIS)

Summary

Overall, definitely are dicta juvenile in queer is very difficult. However, there are way send methods that using them can be significantly reduced crime in the area of children, Prevented from expanding its scope. Juvenile in queer, a new and disturbing is the social damage, and consists of a series of crimes committed by children and dole scents, Iran, which comprise 46% of people under 18 years, Identification of ender sin of paramount, Juvenile off ender sin Iran for the tools is very rich. Delinquency is a phenomenon that all human societies of the past to have been encountered with that, and relief to combat this phenomenon are resorting to various methods today, almost a big problem today is the world's societies, If this Problem in past years, especially in advanced in dust countries, Now the industry's development and effects of urbanization is a global phenomenon. Select methods and tools for decision making in criminal policy Courts for juvenile off delinquency as one of the main ways of dealing with children.

Therefore, guidance and training for families with children can be treated to a bright future of this country and directing it to their also great help to. Family and school and community are three major factors, the evolution of social life. Preventing crimes much more important and can significantly prevent crime life social. The children's delinquency social factors of totally include three following groups. 1) The delinquency against others properties and assets such as robbery and document forge. 2) The delinquency against persons such as hilling, severity violation, and will fully or murder. 3) The delinquency against public safety and orders, such as whoredom narcotics trafficking, derangement in social safety and others and computer crime. The first chapter is an overview of the crime boys and the definition of the phenomenon of crime, social significance of crime is being investigated. And the definition of the crime in different countries, different social classes. It is in this regard from various sources, such as going to the criminal courts and mental scientists, doctors and collect a variety of information on child crime.

Comparative difference between the crimes of war and peace is.

In the second chapter: The study of the sociology and psychology of crime and the crime is a social phenomenon and the causes and ways to prevent it is very necessary. In the sociology after family, the role the second important factor of economic poverty. We examine the social environment, cultural environment, natural environment, economic environment, the impact of the mass media, the impact of cinema and television, press. The role and impact of duplication and lack of love, family problems, working mothers, the absence of the father in the family, lack of parental considered and investigated.

In the third chapter: The quality and organization of courts and a brief history of the development of their children and how courts have reviewed the children in the world. We are also going to the formality of court proceedings in Iran. We went on reformatory to role the juvenile institution, history of its formation, became part of a juvenile institution. And the reformatory the parts important tasks such as character recognition, children, education and training, medical treatment, and the care and upbringing of children is modified after removal methods. We also discussed the importance of crime prevention contract. Finally, investigate the United Nations Guidelines for the Prevention of crime in some parts. 1- Basic principles, 2- Domain of the guidelines 3- General Prevention 4- Social training methods 5- Social manners 6- Legislation and total offence about the teenagers.

In this sense we may ascertain that the work bears both theoretical-academic and practical-applied character.

Armenia

ՀՀ Ազգային գրադարան



NL0865635

